Հավելված N 2

ՀՀ Կադաստրի կոմիտեի ղեկավարի

2024 թվականի Դեկտեմբերի 4-ի

N 408 -Լ հրամանի

ԿԱՐԳ

ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

1. «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեում (այսուհետ՝ Լիազոր մարմին) հաշվառած գեոդեզիստների և մարկշեյդերների, ինչպես նաև քարտեզագրողների, չափագրողների, հաշվառողների և հողաշինարարների ինքնակարգավորվող կազմակերպությունների (այսուհետ՝ Ինքնակարգավորվող կազմակերպություն) կողմից Լիազոր մարմին ներկայացված և հաստատված՝ իրենց անդամների վերապատրաստման ուսումնական ծրագրերն իրականացնելու նպատակով Ինքնակարգավորվող կազմակերպությունը սույն կարգով և ժամկետում հայտարարում է մասնագիտական մրցույթ:

2. Մասնագիտական մրցույթը հայտարարվում է մրցույթն անկացնելուց առնվազն մեկ ամիս առաջ:

3. Մասնագիտական մրցույթ հայտարարելու վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է էլեկտրոնային միջոցներով, տեղադրվում է սոցիալական կայքերում, էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով ներկայացվում է ՀՀ բարձրագույն ուսումնական բոլոր հաստատություններին: Մասնագիտական մրցույթ հայտարարելու վերաբերյալ հայտարարությունը կարող է հրապարակվել նաև այլ միջոցներով:

4. Մասնագիտական մրցույթ հայտարարելու վերաբերյալ հայտարարությունը պարտադիր պարունակում է մրցույթի անցկացման օրվա, վայրի, մրցույթին

Երևան 0023, Արշակունյաց պողոտա 7, հեռ՝ (+ 374 60) 47-41-10, էլ՝ փոստ՝ info@cadastre.am, կայք՝ www.cadastre.am

Կադաստրի կոմիտե

մասնակցելու համար անհարժեշտ փաստաթղթերի ցանկի, ներկայացնելու կարգի, վերջնաժամկետի, մրցույթի գնի, վերապատրաստման թեմաների և ժամաքանակի վերաբերյալ տեղեկատվություն: Մասնագիտական մրցույթ հայտարարելու վերաբերյալ հայտարարության մեջ կարող են նշվել նաև պահանջներ՝ վերապատրաստման ուսումնական ծրագրին համապատասխան մասնագիտական դասախոսական կազմի և քանակի, ուսումնական ծրագրերի բովանդակության վերաբերյալ և այլն: